

Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 202

Այս վարդապետութեան քննադատները պնդում են որ եթէ անհնար է որ հաւատացեալներ հաւատքն ուրանան եւ թէ նրանք անշուշտ կ'յարատեն մինչեւ վերջը, ապա Աստուծաշնչում գտնուած զգուշացումներն կ'լինեն անպէտք ու անիմաստ (Մատթոս 9:8-9, 11, Եբրայեցիս 3:12-14, 4:11, Հռովմայեցիս 11:22): Առաւել եւս, նրանք նշում են հատուածներ որոնք կարծես թէ ուսուցանում են որ որոշ հաւատացեալներ հեռացան հաւատքից եւ ուրացան այդ:

Աստուծ աշխատում է միջոցների գործածութեամբ – Նախքան նկատի առնել այսպէս հատուածները, հարկ է ընդգծել թէ Աստուծ աշխատում է միջոցների գործածութեամբ իրականացնելու մեր կեանքում եղած Իր նպատակները: Ինչպէս տեսանք մեր արդարացման վարդապետութեան ուսումնասիրութեան ընթացքում, թէպէտ մեր փրկութիւնը Աստծոյ մի ձրի պարգէն է, եւ մարդս ոչինչ չի անում շահելու այն, սակայն մենք արդարանում ենք միայն երբ հաւատում ենք Քրիստոսին: Դրա համար է որ մենք ասում ենք թէ հաւատքը արդարացման գործիքային պատճառն կամ միջոցն է (Մարկոս 1:15, Յովհաննէս 3:16, 20:31, Գործք Առաքելոց 16:31, Հռովմայեցիս 3:21-28, 10:9, 13, Գաղատացիս 2:15-16, Փիլիպպեցիս 3:9): Ուստի տեսնում ենք որ մեր արդարացման մէջ Աստուծ աշխատում է մեր հաւատքի միջոցով:

Զգուշացումները հաւատքի մէջ մեզ պահպանելու Աստծոյ միջոցներն են – Հիմա որ մենք փրկուած ենք Աստուծ գործածում է բազմաթիւ միջոցներ սրբագործելու եւ պահպանելու մեզ ի Քրիստոս՝ ինչպէս հաւաքական պաշտամունք ու աղօթք, Խօսքի քարոզչութիւն, խորհրդների մատակարարում, ծառայութիւն, նւիրատութիւն, անձնական աղօթքի ու Խօսքի սերտողութեան ժամ, եւ այլն: Ուրիշ միջոցներ որն Աստուծ գործածում է քաջալերելու մեզ որ չհրաժարուենք եւ հաւատքումը յարատեւենք Իր Խօսքի մէջ գտնուած զանազան քաջալերութիւնները, յորդորանքները, յանդիմանութիւններն, ու նաեւ զգուշացումներն են:

Եւ թէկուզ հաւատացեալներ կարող են շեղուել հաւատքից ու նոյնիսկ ընկնել ծանր մեղքերի մէջ, Սուրբ Հոգին թոյլ չի տայ որ նրանք շարունակեն այդ վիճակում, քանի որ Նա կ'գործի նրանց կեանքերումն ու սրտերումը յանդիմանելու եւ դաստիարակելու նրանց, եւ ուստի պատճառելով նրանց ուշադիր լինելու աստուծաշնչային յորդորանքներին ու զգուշացումներին (Եսայիա 55:10-11): Ուստի, Սուրբ Գրքի զգուշացումները իրական են, եւ ճշմարիտ հաւատացեալներ լուրջի են առնում դրանք: Թէկուզ մենք վստահ ենք որ կ'յարատեւենք մինչեւ վերջը՝ ինչպէս Աստուծ խոստացած, սակայն մենք չենք ենթադրում լինել հաւատացեալներ մի թէ որ տեսնենք հաւատքի ու ապաշխարութեան ներկայութիւնը մեր կեանքերումը: Աստծոյ մեզ պահպանումը մի կրաւորական պահպանում չի, կատարելով ինքնիրեն եւ առանցի մեզ. փոխարէն, մենք ունենք մաս ու բաժին մեր յարատեւութեանը մէջ:

Աստուծ նաեւ գործածում է ուրիշ հաւատացեալների սերը, խրախուսանքն, ու յանդիմանութիւնը ուղղելու եւ քաջալերելու մեզ մնալ հաւատքի մէջ հաստատուն (Մատթէոս 18:15-20, Գաղատացիս 6:1-2, Եբրայեցիս 3:13, 10:24): Այսպիսով մենք ականջ ենք դնում աստուծաշնչային զգուշացումներին որովհետեւ գիտենք որ Սուրբ Հոգին գործածում է դրանք որպէս միջոցներ առաջնորդելու մեզ ինքնաքննութեան, տրտմելու մեր մեղքերի համար, դառնալու մեր մեղքերից, շարունակել վստահելու Տիրոջը, աճելու սրբութեան մէջ, եւ այդպիսով յարատեւելու մինչեւ վերջը (Բ. Կորնթացիս 13:5, Փիլիպպեցիս 1:6, Կողոսացիս 1:22, Ա. Թեսաղոնիկեցիս 5:23-24, Բ. Պետրոս 1:10-11, Յուդա 24-25):

Ահա Աստուծ այսպէս է գործում մեր կեանքերի բոլոր մարզերում: Նա է բոլոր եղելութիւնների հիմնական կամ գլխաւոր պատճառը. Նրա հրովարտակը սահմանուած, հաստատ, ու անփոփոխական է, բայց եւ այնպէս Նա գործում է մեր մէջ ու մեր միջոցով՝ որպէս երկրորդական պատճառներ, ուղղելու եւ իրականացնելու իր ծրագրերը (Գործք Առաքելոց 27:22-26, 31, 34, 44, Եբրայեցիս 12:1-3): Ուրեմն բացայայտ է որ թէպէտ Աստուծ խոստումներ է տալիս՝ որն անխախտելի եւ վստահելի են ինչպէս Իր նկարագիրը, սակայն Նա կատարման է բերում դրանց տարբեր միջոցներով՝ ինչպէս Իր հրամանները, յորդորները, ու նոյնիսկ Իր զգուշացումները: Ճիշտ ինչպէս որ Աստծոյ մեզ հոգ տանելու խոստումը չի վաւերացնում ծուլութիւն կամ անփոյթ ապրելակերպ, եւ փութ դարձնում Նրա հրամաններն ու զգուշացումները (Մատթէոս 6:11, 25-26, Բ. Թեսաղոնիկեցիս 3:10), ապա ոչ էլ պիտի Աստծոյ մեզ պահպանելու խոստումը յառաջացնի անհոգ ապրելակերպ եւ իզուր դարձնի Նրա զգուշացումները: Իրականում, այս սկզբունքը ի գործ եւ ազդեցիկ է մեր կեանքերի բոլոր մարզերումը:

Աստուծ սիրում է մեզ, Իր ժողովրդին, այնքան որ Նա թոյլ չի տայ մեզ որ անվերջանալիօրէն ընկղմուել ու տապալել անապաշխար մեղքի ու անփոյթ ապրելու մէջ, այլ կ'գործածի բոլոր հարկաւոր միջոցները՝ ներառեալ Իր Խօսքի մէջ գտնուած քաջալերանքները, յորդորանքներն, ու զգուշացումները, որպէսզի առաջնորդի մեզ դէպի ապաշխարութիւն ու հաւատք՝ ապահովելով որ մենք մնանք Իր մէջ հաստատուն, եւ շարունակենք սիրելու Իրեն ու Իր ճշմարտութիւնը: Այս վարդապետութիւնը ուղիղ հասկացած, չի պատճառի յուսահատութիւն եւ վախ այլ աւելի մեծ ուրախութիւն, գործի մղում, եւ վստահութիւն: